

դալ անդամ ձեռք կը պատմեմ նախ մի փոքրիկ առակ
մկնորսի եւ ճանապարհորդի վրայ, եւ ապա կը կըրկ-
եմք մեր սրբադան սկստմութիւնները:

Թարգմանեաց ի Վաղղիականէ

Մկրտիչ Տէր Գէորգեան ճննանեանց

Ղրիմեցի:

Ի 23 մարտի 1869 ամի

Ի Ս. Վ. անս Հառիճոյ:

ՍԵՐԵՆԿՆ

Ողջոյն թռչնակիդ, որ յիմ պատուհան

Առեալ զհանգիստ, մուտղես միայն:

Ողջոյն, որ զձայն հեղատոյլ, քնքուշ,

Կենսառիկ ընդ շունչ զեփիւռին լնուս:

Մինչ նա թեւ ի թեւ խաղայ ցողաքեր,

Թողուլ ի մեր սիրտ զիւր սէր եւ զխինդ.

Անձկութեան արցունք յաչս իմ լուսաբոց

Կախին արդ ի շար ի սէր քոյդ երգոց:

Երգոց, ում յառաջ ի սուգ տրտմութեան

Ունկն կախէի յիմ սուրբ Հայաստան:

Ա՛հ, թէ կայարան քեզ լինէր միայն

Շքեղ, բայց տխուր... իմ այս պատուհան.

Ա՛հ, թէ թերաբամ բոք զքեզ անձկոտ

Կարէի զիտել յամէն առաւօտ:

Ձի դու ի ծոցոյ վեճն Արարատայ

Հիւր եկիր եւ յայց հէք որդւոյս նորա:

Արդ միայնութեանս կարեկից ընկեր,

Եւ միշտ մխիթար լեր, թռչնիկդ իմ, լեր:

Եւ յայս պատուհան հաճեսց քեզ դադար

Առնուլ եւ երգել միշտ յիմ մխիթար.

Ձի սիրտ պանդխտին, զերթ նաւաբեկին,

Ձիցէ ճմլեսցէ իսպառ սուգ յետին:

ԱԿԵՏԻՔ ԱԿԱԳ ՍԱՐԵԱԿԱԳ

ՓԻՆԱԶԵԱՆՑ

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

ԶԱՆԳԱԿ

Ի՛նչ քաղցրալուր եւ ի՛նչ անոյշ

Քո ձայն կուգայ մութ լուսոյն.

Բոլոր մարմնոյ ինչպէս աշխոյժ

Կազդէ ախորժ քո հնչիւն,

Երբ խոր քնոյ մէջ ընկղմած

Մահկանացուն կոստնու վեր,

Միտքը կուգայ կեանքն ու Աստուած

Եկեղեցւոյ քաղցր տաղեր:

Կարծես կասէ, հնչմամբ քաղցրիկ

Ջարթիր փութա քովիդ վանք

Եւ երբ կերթաս նոյնպէս „զարթիք“

Կերգին Գալիք եւ տղայք:

Ի՛նչ զգացմունք վեհ սրբարար

Կզգայ քո սիրտ այն ժամուն

Աղքատ, հարուստ, առողջ տկար

Կուտան ուրախ զոհութիւն:

Թէ մահճին մէջ պառկող խաղաղ

Թէ արթնցած զիւղացին,

Թէ ծովաչու ծամբորդ խիզախ

Մօտենալով եզերքին,

Քո հնչիւնը երբ կսեն

Խաչ հանելով երեսնին,

Օրհնեալ է միշտ Աստուած կասեն

Եւ մեծայայտ կըհրճուին:

Եւ զիւղացիք պարզ արտավար

Որ ամբողջ օր քրտնելով,

Կպատրաստեն ձմրան պաշար

Բահ ու բրիչ շալկելով.

Երեկոյեան ի քո հնչիւն

Աղօթելով լուելեայն

Հանդարտաբայ կղանան տուն

Տեսնել իւրեանց զերդաստան:

Քաղցր է հնչիւնդ այն զանգակ,

Տալիդն ու քնար կմոռնան

Երբ կիշես յայդուն նոր կեանք

Եւ հանգիստ բուն իրիկուան.

Բայց երբ թրթրակ եւ տխրագին

Կհնչէ յօդս քո պղինձ,

Ծեղաւորին եւ արգարին
Կպաշարէ սուգ Յախիժ:

Կէկ անդամոյ մարդկայնութեան
Թէեւ մահը կը յիշես,
Բայց կարծես թէ բոլոր բնութեան
Վերայ անշուք քոյ ձգես.
Եւ մօտակայ բոլոր մարդիկ
Թողով հրմուսնը յահ ու վախ,
Միմեանց կը յիշեն իւրեանց կընիք
Թէ կեանքէն վերջ կուգայ մահ:

Այն մահէ չլինիր խոյս
Այն մանգաղէն սայրասուր,
Բայց խաւարին յաջորդն է լոյս
Եւ լաւ գործոց ճոխ տրիտուր.
Զսարսուփինք այն հնչիւնէն
Որ մահադոյժ է յանկարծ,
Յաղթող խոյն է մեր ապաւէն
Այն որ պաշտպան էր մեր Հարց:

Կային նշան մեր հայրերուն
Խարիսխ էր միշտ հաւատոյ,
Եկեղեցիք վանքեր սիրուն,
Ազբխար յուսոյ եւ սիրոյ,
Խաչով դրոշմներ մեր ծախաւոր
Երբ զանգակը կը զարնէ.
Ամուր պահեմք մեր հաւատը
Այն մեզ թէ յոյս թէ կեանք է:

Ս. Մարութեանց

Կապիկն որ... զինչ տեսանէ ի մարդոյ,
Չայն եւ ինքն առնէ: Աւ ետես զե ձկնորսն
ձգեաց զուռկան ի վերայ ձկանցն, եւ ինքն
գնաց ի հաց: Աւ կապիկն իջեալ ի ծառէն
էառ զուռկանսն, եւ նման ձկնորսի կամեցաւ
ձգել ի վերայ ձկանցն. ոյլ ինքն ըմբռնեցաւ
ի նմանէ, եւ ասէ լալով, յիշաւ ի ըմբռնեցոյ
վասնզի հանց կողմ ձգեցի զձեռքս՝ որ ոչ էի
հմուտ:

Յուցանէ առախս, թէ՛ ո՛վ մարդ, օտարաց
մի՛ ձեռն արկաներ եւ մի՛ ցանկար գործոյն,
որ չես հմուտ եւ չէ՛ քեզ պատշաճ, թէ՛ մարմ-
նաւոր եւ թէ՛ հոգեւոր աստիճան. զե կորուստ
լինի քեզ եւ ոչ շահ:

(Աղուեսաղիք)

Դողովեցան միտնք ի մի տեղ եւ սկսան
հետ միմեանց խօսել, եւ ասին. ընդէ՞ր է որ
մեք ոչ զրեհ ունինք եւ ոչ զեղծութիւն, որ կա-
տուն զմեզ զիւրաւ բռնէ. եկայք զե խոր-
հեցուք բարի հնար մի. եւ սրեցին փայտս
եւ կապեցին ի գլուխ խրեանց, եւ ասին,
երբոր կատուն դայ, կուռինք հետ՝ որ զմեզ
չբռնէ: Եւ ահա եկն կատու մի եւ մկերն փախ-
եան եւ ոչ կարացին ընդ ծակն ի ներս մտա-
նել. եւ կատուն սկսաւ ջարդել զամենեսեանս:

(Անդ)

ՀԱՆԵԼՈՒԹԻՒՆ

4.

Այն ինչ աշխարհ է արարած,
որ կարօտի լուսաւորաց.
որքան օղբ լինի վճիտ
նորա համար է միշտ ամպած:

2.

Այն ինչ տուն է անհիմն փորրիկ,
յորում բնակին յոլով մարդիկ,
երկու շքեղ լաւ դռներով,
եւ եւ մուտս առնեն միով:

Յովհ. Միրզաբէկեանց:

Ա. Զ. Դ.

Մի քանի բանաւոր պատ-
ճառներէ ստիպեալ տպա-
րանը մի ամիս պիտի դա-
դարի՝ ուստի յաջորդ օգոս-
տոս ամսագրոյն սակաւ ինչ
ուշանալուն համար կը յու-
սամք, որ մեր սիրելի Ազգա-
յինք ներողամիտ կը լինին:

Ներկայ Թուոյս 33 երեսի առաջին էջին ծանօ-
թութեան մէջ դրուած հրեշտակացն, պէտք է հր-
եշտակապետն. ընթեռնուի:

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷԶՄԻԱՅՆԻ

ՀՐԱՄԱՆԱԻ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ